

ՈՌԻՔԵՆ ԱՓՈՅՑԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ:

ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ, ՀԵՇԽՈՍՍՅԻՆ ԽՈՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓՈՍՏԱՅԻՆ, ՀԵՇԽԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը նվիրված է միջազգային և արտասահմանյան երկրների օրենսդրական ակտերուն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրավական կարգավորման վերլուծությանը: Հեղինակը համակողմանիորեն հետագործության է ենթարկել այդ հարցին վերաբերող միջազգային օրենսդրությունը և արտասահմանյան երկրների սահմանադրությունները՝ բացահայտելով առանձին առանձնահատկությունները և հիմնական ընդհանուր մոտեցումը:

Հիմնարար բառեր: նամակագրություն, հեռախոսային խոսակցություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, մարդու մասմասության կյանքի անձնության մասին աշխաղական պաշտպանություն:

Առաջին անգամ միջազգային իրավական փաստարդերուն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների (այսուհետ՝ հաղորդագրություն) գաղտնիության իրավունքը ամրագրվել է 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 12-րդ հոդվածում, համաձայն որի՝ «ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության, ինչպես նաև որևէ ոտնագրության իր պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնագրությունից օրենքնով պաշտպանվելու իրավունք»:

1950 թվականի՝ «Մարդու իրավունքների և իշխանարար պատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայուն ամրագրվեցին այս անգամ այդ իրավունքի սահմանափակման հնարավորության հիմքերը: Այսպես, նոյն կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք, չի բույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդակարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց պաշտպանության նկատմամբ»:

Այսպիսով, իիշատակված միջազգային իրավական ակտերի համադրված վերլուծությունը փաստում է, որ դրանցում ամրագրված նորմերը

բացահայտում են «կամայական միջամտություն» եզրույթի նշանակությունը, սակայն, կոնվենցիայով ամրագրված նորմի իրավական բովանդակությունից բխում է, որ այն առաջին հերթին հարկավոր է դիտարկել իրել միջամտություն եղբարդ անձնանունիցից հաղորդակցողների անձնական ազատության նկատմամբ, ինչը ենթադրում է օրենսդրության խախոսում՝ առանց այն նպատակների հետապնդման, որոնք սահմանված են արդեն Հռչակագրություն:

ՄԱԿ-ի՝ 1966 թվականի «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածը նոյնական նոյն տրամադրությամբ բովանդակում է Մարդու իրավունքների ընդհանուր հոչակագրի 12-րդ հոդվածը՝ ավելացնելով նաև «անօրինական միջամտության» անթույլատրելիության արգելող նորմը:

Անձնական տվյալների պաշտպանության խնդիրին միջազգային մակարդակում քննության առարկա դիտարկեց ՄԱԿ-ի Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), որը 1980 թվականին ընդունեց «Մասնավոր կյանքի և միջազգային փոխանակումների ժամանակ անձնական տվյալների անձնանումիշների կամ հիմնական դրույթները», որոնցում արձանագրվեցին անձնական տվյալների հետ աշխատելու հիմնական սկզբունքները:

Այդ սկզբունքները որոշակիացվեցին Եվրոպայի խորհրդի կողմից 1981 թվականին ընդունված Անձնական տվյալների նշակման ժամանակ ֆիզիկական անձանց իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայում, որով իրավական կարևոր նախադրյալներ ստեղծվեցին անձնական տվյալների հետ աշխատելու հիմնական սկզբունքները:

Հետագայում անձնական տվյալների պաշտպանության համար կարգավորված է պաշտպանության ազգային օրենսդրությունների ընդունման համար:

Հետագայում անձնական տվյալների պաշտպանության համար կարգավորված է պաշտպանության ազգային օրենսդրությունների ընդունման համար:

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության խորհրդի ու Եվրոպական խորհրդարանի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի «Մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության անձնական տվյալների մշակման կիրառմամբ ու այդ տվյալների ազատ շարժման վերաբերյալ» 95/46/ԵՄ թվակիր դիրեկտիվում, ինչպես նաև 1997 թվականի դեկտեմբերի 15-ի «Հեռահաղորդակցության ոլորտում անձնական տվյալների մշակման և գաղտնիության պաշտպանության մասին» 97/66/ԵՄ թվակիր դիրեկտիվում:

Ի վերջո, գոյություն ունեն նաև մի շարք, այսպես կոչված, «հատուկ» միջազգային-իրավական այլ ակտեր, որոնցից կարելի է կարևորել բոլորին նամակագրության ոլորտը կարգավորող «Համաշխարհային փոստային հոչակագիրը» (Բեռն, 1874թ.), ինչպես նաև փոստային առաքումների շրջանառությունը կարգավորող այլ համաձայնագրեր (օրինակ, «Ծանրոցների մասին համաձայնագիրը», Սեռվ, 1994 թ. և այլն):

Հետազոտության խնդրո առարկա հարցի շրջանակում անհրաժեշտ է հիշատակել նաև էլեկտրակափի միջազգային ծառայությունից բնակչության կողմից օգտվելու վերաբերյալ 1982 թվականի «Էլեկտրակափի միջազգային հոչակագիրը»: Հարկ է ընդգծել, որ տվյալ հոչակագրի 22-րդ հոդվածը սահմանում է միջազգային էլեկտրակափի հաղորդագրությունների գաղտնիության պաշտպանության շրջանակները և հոչակում. 1. Անդամ պետությունները պարտավորվում են ընդունել էլեկտրակափի կիրավող համակարգի հետ համատեղելի բոլոր հնարավոր միջոցները՝ նպատակ ունենալով ապահովել միջազգային հաղորդումների գաղտնիքը: 2. Այնուամենայնիվ, Հռչակագրի անդամ-պետությունները իրենց իրավունք են վերապահում փոխանցել այդ հաղորդումները իշխանությունների իրավասու մարմիններին՝ իրենց ներքին օրենսդրության կատարումը պահպանելու կամ միջազգային հոչակագրերը, որոնց անդամն են հանդիսանում, կատարելու համար»:

Բացի այդ, համանման դրույթներ են բովանդակում «Էլեկտրակափի միջազգային միության կանոնադրությունը», «Էլեկտրակափի միջազգային միության հոչակագիրը» (Ժեն, 22.12.92թ., փոփոխություններով ու լրացումներով 06.10.98թ.), նաև՝ 1992 թվականի՝ Էլեկտրակափի միջազգային միության կանոնադրության նկատմամբ ստուգումների իրականացնան ընթացակարգը (Մինեապոլիս, 06.10.98 թ.):

Հետազոտման թեմայի շրջանակում կարևոր հետաքրքրություն է առաջացնում «նամակագրություն» եզրույթի իրավաընկալման հիմնահարցը: Թեպետ «նամակագրություն» հասկացության նորմատիվային սահմանումը բացակայում է ինչպես միջազգային իրավական ակտերում, այնպես էլ պետությունների ազգային օրենսդրությամբ, այ-

նուամենայնիվ, այն տարածական մեկնաբանությունների տեղիք է տալիս⁴: Այսպես, Եվրոպայի խորհրդի ինստիտուցիոնալ մարմինների կողմից «հաղորդագրություն» և «նամակագրություն» եզրույթները դիտարկվում են որպես նույնարդուկտուական հասկացություններ այն դեպքում, եթե Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ «նամակագրություն» եզրույթը կազմում է «մասնավոր կյանք» ու «հաղորդագրություն» հասկացությունների բաղկացության մաս: Նույն վերաբերում է ռադիոալիքների (Էլեկտրամագնիսական) միջոցով փոխանցվող հաղորդագրությունների ընդունման մասին դրույթին, որը նույնապես դիտարկվում է մասնավոր կյանքի ու հաղորդագրության հարգելու իրավունքի տարրը:

ԱՄԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, մեկնաբանելով «Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների» մասին դաշնագրի 17-րդ հոդվածի դրույթները, արձանագրել է. «Նամակագրության ամբողջականությունն ու գաղտնիությունը պետք է երաշխավորվի իրավաբանորեն և փաստացի, իսկ հաղորդագրությունը պետք է հասցեագրվի հասցեատիրոջ՝ առանց առզարկելու և առանց նրա, որ այն բացվի ու ընթերցվի, և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային կամ այլ դիտարկումը, հեռախոսային, հեռագրական և կապի այլ ձևերի վերահսկումը, լին ու խոսակցությունների գրառումը պետք է արգելվեն»:

Ինչ վերաբերում է ազգային օրենսդրությամբ դիտարկվող իրավունքի սահմանադրամիրավական ամրագրման միջազգային փորձի վերլուծությանը, ապա ակնհայտ է դառնում հետևյալ ընդիհանրականը, որ հատկապես Արևմտյան Եվրոպայի երկրների սահմանադրություններում բացակայում է «մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք» հասկացությունը, իսկ Ֆրանսիայի Սահմանադրությունը ընդիհանրապես չի սահմանել հետազոտության առարկա իրավունքը:

Թերևս հարկ է նկատել, որ միայն XX դարի 90-ական թվականներից սկսած՝ այդ երկրներում նշանակած իրավունքի նկատմամբ ընդգծված վերաբերմունք ցուցաբերվեց, ինչը պայմանավորվեց այն հիմնավորմամբ, որ առանձին պետությունների սահմանադրություններում տարանջատելով մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը փոստային կապի գաղտնիության իրավունքից՝ այդուհանդեմ, դրանք չդիտարկվեցին որպես քաղաքացի մասին տեղեկատվության հավաքագրման արգելվի տարրը:

Նշենք, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրական կարգավորումներին համապատասխան նամակագրության և կապի այլ տեսակների գաղտնիության իրավունքը նույնապես կարող է սահմանա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փակվել միայն դատարանի որոշման և (կամ) օրենքի հիման վրա: Այսպես, ԱՊՀ անդամ-պետությունների կողմից ընդունված Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների մասին կոնվենցիայով (Մինսկ, 26.05.95թ.) ամրագրված նորմերի համալիր վերլուծությունից բխում է, որ անդամ-պետությունները մարդու և քաղաքացու այդ իրավունքը ճանաչում են որպես բարձրագույն արժեք և մարդասիրական արժեքների, մարդու բնական ու անխախտելի իրավունքների ու ազատությունների տեսանկյունից տրվում է առաջնահերթ նշանակություն :

Միաժամանակ, Համագործակցության պետությունները առանձնել են միջազգային պարտավորություններ՝ երաշխավորելու մարդու ու քաղաքացու անձնական իրավունքները՝ չմիջամտելով անձնական կյանքին, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին, անձնական ազատության ու անձեռնմխելիության իրավունքին, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքին: Այսպես, «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների մասին» ԱՊՀ-ի 1995 թվականի Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր մարդ ունի իր անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու, իր կացարանի անձեռնմխելիության ու նամակագրության գաղտնիության իրավունքը»¹⁰:

Դմելով տվյալ եզրույթի քերականական մեկնարաննար՝ անհրաժեշտ է փաստել, որ հենց այս երկների սահմանադրական մակարդակում է նամակագրությունն ընդհանուր առմանք ամրագրված որպես կապի բոլոր (տարբեր) միջոցների օգնությամբ փոխանցվող տեղեկատվություն և անձեռնմխելիության մաս: Մեր կարծիքով, այդ եզրույթի օգտագործումն այնքան էլ տեղին չէ այն իմաստով, որ պետության կողմից պաշտպանվող ու երաշխավորվող գաղտնիության իրավունքի իրացումը փոխակացվում է միայն փոստային կապի և էլեկտրոնային հաղորդակցության որոշակի ձևերի անձեռնմխելիության հետ:

Տեսանելի է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմում ընդհանուր փոստային և հեռախոսային կապի ձևերի որոշակիացում այն առումով, որ «այլ հաղորդումներ» եզրույթի բովանդակությունը գործնականում համապատասխանում է «կապի այլ միջոցներով փոխանցվող տեղեկություններ» եզրույթի բովանդակության հետ: Ինական, անհրաժեշտ է նկատել, որ «հաղորդումը» 1) «այն է, ինչը հաղորդվում է», 2) «ուրածության վրա կապ է որևէ միջոցի, այդ թվում՝ կապի միջոցի օգնությամբ»:

Այդ արամաքանությամբ պայմանավորված՝ կարելի է փաստել, որ հաղորդումների գաղտնիու-

թյուն նշանակում է այդ հաղորդագրությունների գաղտնիություն, կամ նույնն է, ինչ հաղորդագրությունների կամ հաղորդումների օգնությամբ փոխանցվող տեղեկատվության գաղտնիություն: Հնարավոր է, հենց այդ հիմնավորմամբ է «անձնական տեղեկատվության գաղտնիք» եզրույթը:

Ինչ վերաբերում է «այլ հաղորդումներին», ապա հարկ է նշել, որ այն ընկալվում է որպես ցանկացած տեղեկատվություն, որը մի մարդուց փոխանցվում է մյուսին կամ մյուսներին, և ենթադրվում է դրա հայտնիությունը միայն իրենց, եթե այլ բան չի բխում հաղորդակցվողների ցանկությունից: Այդ իմաստով անհրաժեշտ է տարանջատել նաև կապի միջոցների անձեռնմխելիությունը հաղորդագրության անձեռնմխելիությունից:

Զևակերպելով «այլ հաղորդումներ» եզրույթը՝ օրենսդիրը որպես հիմնական չափանիշ օգտագործում է հենց տեղեկատվության փոխանցման եղանակը: Այսպես, ԱՊՀ անդամ-պետություններում հաղորդագրության գաղտնիության իրավունքի սահմանադրախրավական ամրագրումը նույնական են, բերևս հիմնական տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրությունում օգտագործվում է նաև «այլ հաղորդումներ» եզրույթը:

Այսպիսով, ընդհանրացնելով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի միջազգային - իրավական և սահմանադրախրավական կարգավորումների տեսական - իրավական վերլուծության արդյունքները, անհրաժեշտ է կարևորել հետևյալը.

ա) ՍԱԿ-ի՝ 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագի 12-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթներն ամբողջությամբ ու լիարժեքությամբ արտացոլված են ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի շրջանակներում դիտարկվող «հաղորդումներ» հասկացության իրավական բովանդակության մեջ:

բ) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նորմատիվային կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև դրա սահմանափակման պայմանների որոշակիացումը սերտորեն կապված են վերլուծվող անձնական իրավունքի՝ հաղորդագրության գաղտնիության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների հետ, սակայն դրա սահմանափակումը կարող է իրականացվել բացառապես «օրենքին համապատասխան», եթե դա «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

գ) սահմանադրական մակարդակում ամրագրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը այլ հարակից իրավունքների, մասնավորա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես՝ անձի անձեռնմխելիության իրավունքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունքի, պատվի, արժանապատվության հարգման իրավունքի, հաղորդագրության անձեռնմխելիության իրավունքի հետ: Չնայած այն հանգամանքին, որ առանձին պետությունների սահմանադրություններում գրեթե բացակայում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ իբրև համալիր իրավական իրավունքի ինստիտուտը, այնուամենայնիվ, դրա փոխարեն օգտագործվում են մասնավոր կյանքի ու ընտանեկան կյանքի ինստիտուտները, որոնք նույնպես կարելի է դիտարկել որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության տարրեր:

Դ) Եվրոպական Երկրների սահմանադրությունների վերլուծությունը վկայում է, որ առանձին հոդվածներով թերևս ամրագրվում են փոստային կապի (հաղորդագրության) գաղտնիության իրավունք ու քաղաքացու նկատմամբ տեղեկատվություն հավաքելու արգելվ սահմանող դրույթներ, սակայն դրանք բովանդակային առումով չեն պարունակում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք,

Ե) Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի Երկրների՝ Արևելյան Եվրոպայի Երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի, հաղորդագրությունների գաղտնիության իրավունքի և քաղաքացու մասնավոր կյանքի մասին տեղեկատվության հավաքագրման նկատմամբ արգելվի վերաբերյալ նորմերի մանրամասն ամրագրված լինելը բովանդակային առումով համընկնում է այն երաշխավորվածության հետ, որն առնչվում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռազբական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի

արդյունավետ իրացման հետ ընդհանրապես,

զ) հիշատակված միջազգային իրավական ակտերը չեն դիտարկում հաղորդագրության գաղտնիության իրավունքն իբրև բացարձակ իրավունք, միաժամանակ, չեն սահմանվում դրա սահմանափակման պայմանները, սակայն ենթադրություն է, որ այստեղ առանձնահատուկ դեր պետք է վերապահել միջազգային դատական դոկտրինալ մոտեցումներին:

Դրանք կարող են վերաբերել ազգային օրենսդրություններում համապատասխան իրավակարգավորումների կատարմանը, մասնավորապես անհրաժեշտ է.

1) հատակ սահմանել այն հանցագործությունների կազմը, որոնց քննման կապակցությամբ բույլատրվում է իրականացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում,

2) սահմանել այդ իրավունքի սահմանափակումների տևողության սահմանները,

3) Երաշխավորել և պահպանել դատարանի որոշումների հիման վրա հաղորդագրության գաղտնիության իրավունքի սահմանափակման գոյություն ունեցող պարտադիր ընթացակարգը,

4) հստակեցնել գաղտնալսումների արդյունքների ուղղման, փոփոխման և այլ աղավաղումներից պաշտպանվածության եղանակները,

5) սահմանել այն հանգամանքներն ու ժամկետները, որոնց ընթացքում վերահսկման արդյունքները պետք է պահպանվեն կամ ոչնչացվեն:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Հտ 1, Եր., 2001, էջ 16:

² Տե՛ս Европейская конвенция о защите прав человека и основных свобод. Прецеденты и комментарии. М., 2001, С.6.

³ Տե՛ս Беляева Н. Г. Право на неприкосновенность частной жизни: соотношение международно-правовой и внутреннеударственной регламентации. Казань, 2000. С. 36.

⁴ Տե՛ս Прослушивание телефонов в международном праве и законодательстве одиннадцати европейских стран. Вып. 12 (49). - Харьков:, 2009, С. 256.

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս Human Rights Committee, General Comment 16/32 of 23 March 1988 (Privacy), IIRI/GEN/I/Rev.2, pp. 21-23.

⁸ Տե՛ս Конституция зарубежных государств. М., 2010, С. 67.

⁹ Տե՛ս Օբеспечение прав человека в Содружестве Независимых Государств. Выпуск 1. Основополагающие документы СНГ / Под ред. О.О.Миронова - М., 1999. С. 5.

¹⁰ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու, հոդ.3, էջ 589:

¹¹ Տե՛ս Словарь русского языка в 4-х томах / АН СССР, Институт русского языка / Под ред. А. П. Евгеньевой - 2-ое изд., испр. и доп. - М., 1981 -1984, т. 3. С. 184.

¹² Տե՛ս ՀՀ Սահմանադրության 23-րդ և 43-րդ հոդվածներ:

Рубен Апоян

Соискатель кафедры конституционного и муниципального права института политологии и права Армяно-Российского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Правовое регулирование права на тайну телефонных переговоров и иных сообщений: международный опыт и сравнительно-правовой анализ

Настоящая статья посвящена теоретически-правовому анализу правового регулирования права на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений в международных актах и законодательстве зарубежных стран. Автор всесторонне исследования относящееся к данному вопросу международное законодательство и конституции зарубежных стран выявляя отдельные различия и основной общий подход.

Ключевые слова: право на тайну телефонных переговоров, неприкосновенность частной жизни человека, неприкосновенность частной жизни, защита персональных данных.

Ruben Apoyan

Post-graduate student of the
Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

Legal regulation of the right to privacy of telephone conversations and other communications: international experience and comparative legal analysis

This article is devoted to the theoretically - legal analysis of the legal regulation of the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other messages in the international legislative acts and foreign countries constitutions.

The author has thoroughly researched the international legislation referring to that issue and also the legislations of foreign countries, exploring the separate features and the essential general approach.

Keywords: the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other messages, the privacy of a human's personal life, the protection of personal data.